ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒՆՎԱՐ 2026

Ստորագրվեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը

Ախթալայի հանքափորների գործադուլ

IndustriAll-ի անդրադարձն Ախթալայի հանքափորների աշխատանքային պայմանների վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը թվային համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրերի կնքման մասին
- Ստորագրվեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը
- Պանելային քննարկում
- Ախթալայի հանքափորների գործադուլ
- Հանքարդյունաբերության և արդյունաբերության ոլորտի խոշորագույն միջազգային արհմիության IndustriAll-ի անդրադարձն Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատի աշխատողների աշխատանքային պայմանների, աշխատավարձի և գործադուլի վերաբերյալ
- Եղեգնաձորում կայացավ ՀԱՄԿ-ի հերթական հանդիպումն արհմիութենականների հետ



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը թվային համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրերի կնքման մասին

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳԸ ԵՎ ԴԵՌԵՎՍ ՉԼՈՒԾՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սկզբնաղբյուր՝
https://www.youtube.com/watch?v=hujAqRMjcaQ

Ստորագրվեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը

2026թ. հունվարի 23-ին, ստորագրվեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ում անունից հանդես էր գալիս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև:

Պայմանագրով սահմանվում են սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար: Կողմերը համագործակցության հիմնական նպատակն են համարում Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը, որը պետք է հիմնված լինի սոցիալական արդարության սկզբունքի վրա և ուղեկցվի մարդկային կապիտալի զարգացմամբ, զբաղվածության մակարդակի բարձրացմամբ, աղքատության կրճատմամբ, աշխատանքային իրավունքների պաշտպանությամբ և արժանապատիվ աշխատանքի ամրապնդմամբ:

Ողջույնի խոսքով հանդես եկան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Հայաստանի Գործատուների Հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանը, ԱՄԿ բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ Էմանուել Ժուլիենը, Սերգեյուս Գլովացկասը, Հենրիկ Մյոլլերը:

Իր ելույթում ՀԱՄԿ նախագահ Էլեն Մանասերյանը նշեց, որ Պայմանագրի կնքումը հաստատում է պետության, արհմիությունների և գործատուների պատրաստակամությունը սոցիալական արդարության և արժանապատիվ աշխատանքի հասնելու համար:

Էլեն Մանասերյանն ընդգծեց, որ Պայմանագրի յուրաքանչյուր բաժին երկար քննարկումների և բանակցությունների արդյունքում ստացված համաձայնություն է, քանի որ բոլոր կողմերի նպատակը կայուն, զարգացած և արժանապատիվ աշխատանքային պայմաններ ապահովող Հայաստանի Հանրապետություն ունենալն է:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը իր ելույթում նշեց, որ փաստաթղթի ստորագրումը ևս մեկ կարևոր քայլ է սոցիալական գործընկերների հետ համակարգված ու փոխշահավետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ, որի առանցքային նպատակն աշխատողների և գործատուների շահերի հավասարակշռված պաշտպանության ապահովումն ու արդյունավետ երկխոսության կառուցումն է:

Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանն արձանագրեց, որ պայմանագրի կողմ է հանդիսանում ՀՀ կառավարությունը՝ իր ողջ կազմով և լիազորություններով, ինչը լուրջ երաշխիք է գործատուների համար, որ բարձրացրած հարցերը կստանան համակարգային լուծումներ կառավարության բոլոր մակարդակներում:

Սկզբնաղբյուր՝ https://hamk.am/storagrvets-hanrapetakan-kolektiv-paymanagiry
Մեդիայի անդրադարձը՝ https://www.youtube.com/watch?v=MWj6ddFF2sI
https://www.youtube.com/watch?v=Dm9-mGYU3IA

ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի կառավարության, գործատուների և աշխատողների ներկայացուցիչները, քաղաքացիական հասարակությունը և միջազգային գործընկերները 2026 թվականի հունվարի 30-ին մասնակցեցին Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) 2019 թվականի բռնության և ոտնձգությունների մասին կոնվենցիայի (թիվ 190) վերաբերյալ քաղաքականության երկխոսությանը, որի նպատակն էր առաջ մղել կոնվենցիայի իրականացման ազգային ջանքերը՝ այն վավերացնելուց հետո՝ 2025 թվականի դեկտեմբերին:

ՀԱՄԿ -ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը իր խոսքում նշեց, որ արհմիության գործիքակազմերը՝ կոլեկտիվ պայմանագրերը և բանակցությունները, կարող են արդյունավետ լինել աշխատավայրում բռնությունների և ոտնձգությունների բացահայտման, կանխման և բացառման համար:

Սակայն պետք է հաշվի առնել օրենսդրական խնդիրները, օրինակ՝ երրորդ անձանց պաշտպանության մեխանիզմի բացակայությունը, քաղաքացիական դատավարության օրենսգրքի բացերը, ապացուցման բեռի բաշխման առումով, խոչընդոտում են կոնվենցիայի դրույթների պրակտիկ կիրառմանը:

Սկզբնաղբյուր՝ https://hamk.am/panelayin-qnnarkum

ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Ախթալայի հանքափորները վաղը հանդիպելու են տնօրինության հետ. միջնորդը Արիմիությունն է

Գործադուլ հայտարարած հանքափորների թիվը 52 է:

Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանի հարցազրույցները Ախթալայի հանքափորների գործադուլի վերաբերյալ կարող եք ընթերցել ստորև ներկայացված հղումներով.

https://shorturl.fm/lA1Rf
https://shorturl.fm/PcOia
https://shorturl.fm/MZ2NT

Հանքարդյունաբերության և արդյունաբերության ոլորտի խոշորագույն միջազգային արհմիության **IndustriAll** -ի անդրադարձն Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատի աշխատողների աշխատանքային պայմանների, աշխատավարձի և գործադուլի վերաբերյալ

Անվտանգությունն ու աշխատանքային իրավունքները վտանգի տակ են Հայաստանի Ախթալայի հանքարդյունաբերական ձեռնարկությունում



Safety and labour rights under threat at Armenia’s Akhtala mining plant

Workers at the plant report the absence of safe and healthy workplaces, alongside repeated breaches of technical safety rules that expose them to high

industriall-union / Jan 30

Սկզբնաղբյուր՝ **https://shorturl.fm/kExWJ**

Եղեգնաձորում կայացավ ՀԱՄԿ-ի հերթական հանդիպումն արհմիութենականների հետ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ) շարունակում է մարզային հանդիպումները՝ նպատակ ունենալով ուժեղացնել արհմիութենականների իրազեկվածությունն ու պաշտպանվածությունը աշխատանքային իրավունքի հարցերում:

Հունվարի 24-ին հերթական հանդիպումը կայացավ Եղեգնաձորում: Քննարկմանը մասնակցում էին Ագրոարդյունաբերության, Էլեկտրոարհմիության, Մշակույթի և Առողջապահության ոլորտների արհմիութենական ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում մասնակիցների հարցերին պատասխանեցին ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը և իրավաբան Աննա Բարիկյանը:

Արհմիութենականների կողմից բարձրացված հիմնական հարցերը վերաբերում էին՝

- էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացին,
- աշխատանքային ստաժի հաշվարկման կարգին,
- աշխատաժամանակի կազմակերպմանը,
- աշխատանքային ռեժիմին և դրա իրավական կարգավորումներին:

Հանդիպումն անցավ ակտիվ քննարկման մթնոլորտում. մասնակիցները հնարավորություն ունեցան ստանալ մասնագիտական խորհրդատվություն և պարզաբանումներ իրենց հուզող խնդիրների վերաբերյալ:

ՀԱՄԿ-ը շարունակում է իր մարզային այցելությունները՝ նպատակ ունենալով ամրապնդել արհմիութենական շարժումը և նպաստել աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը:

https://hamk.am/ekhegnadzorum-kayatsav-hamk-i-hertakan-handipumy-arhmiutenakanneri-het

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ. ՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am